





ԿԱՄԱՐ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ
ԱՆԿԱԽ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ



19

ՊԷՅՐՈՒԹ 2013



Գույումճեան Կիրակոս

**ՄԱՀԱԹԹԱԴ ՌԻԱՄԱՌՈՒԱԳԵՑ [ԿԱՅԱՆՆԵՐ ԵՒ ԿԵՑՈՒԱԾՔՆԵՐ]
Քուէյթ, 2012, 240 էջ:**

Հայ եւ արաբ ժողովուրդները իրարու կարմրջամ պատմական, քաղաքական, մշակութային, տնտեսական եւ այլաբնոյթ հին ու նոր կապերը լոյսին բերող հետաքրքրական, բովանդակալից եւ գեղատիպ գիրք մըն է նախկին հայէպահայ Կիրակոս (Կարօ) Գույումճեանի 2012-ին Քուէյթի մէջ հրատարակած «Մահաթթադ ուամսուազէֆ» («Կայաններ եւ կեցուածքներ») անուն հատորը:

«Ալ-Գապաս», «Ալ-Տուքթան», «Ան-Նահար», «Ալ-Րար՝յ», «Ալ-Անպասար», «Ալ-Հայաթ», «Ալ-Շարք ալ-սուսաթ», «Աուան», «Ալ-Արապի», «The Daily Star», «Kuwait Times», «Ալդակ», «Արարատ», «Զարթօնք», «Գանձասար» եւ «Ծաղիկ» արաբատառ, անգլիատառ եւ հայատառ թերթերուն մէջ հրատարակուած Կիրակոս Գույումճեանի 47 յօդուածները ի մի խմբած այս ժողովածուն (240 էջ) կը բաղկանայ հինգ մասերէ, որոնք արաբ ընթերցողին կը ներկայացնեն ո՛չ միայն հայ ժողովուրդի հարուստ անցեալն ու հայադրոշմ մշակոյթը, այլեւ՝ Հայկական Յեղասպանութիւնը, հայասպանութեան պատմական փաստը ուրանալու նպատակով Թուրքիոյ ի գործ դրած խեղաթիւրումի եւ ուրացումի կոյր ճիգերը, Ղարաբաղի հարցը, հայեւարաբական պատմական կապերը, տարագրեալ հայ իլեակները պատասպարած արաբ ժողովուրդի ասպնջական եղբայրութեան դասերը, Թուրքիոյ դաշնակից պետութիւններու եւ արդարապաշտ Ֆրանսայի մութ ու յուսատր քաղաքական կեցուածքները, ինչպէս նաեւ արաբ ժողովուրդը յուրոյ ժամանակակից Կանապան նիւթեր:

Իւրաքանչիւր յօդուածի աւարտին հեղինակը նշած է անոր հրատարակման թուականն ու աղբիւրը եւ սեղմ գիծերով անդրադարձած, թէ ինչ պատճառով գրած է ինդրոյ առարկայ յօդուածը:

Կիրակոս Գույումճեան հրապարակագիրին երախայրիքը հանդիսացող այս հատորին վերջին 17 էջերով, թարգմանիչ եւ բանասէր Միհրան Մինասեան հակիրճ գիծերով ներկայացուցած է յօդուածներուն հայերէն ամփոփումը:

Արաբ լայն Կանապաններուն պատմական ճշմարտութիւնները ներկայացնող, հայանպաստ մթնոլորտ ստեղծող, տագնապահար հայու հոգիին եւ մտքին ծալքերը լայն բացող ողջունելի հրատարակութիւն մըն է Կիրակոս Գույումճեանի վերոյիշեալ հատորը: Մէկ խօսքով՝ ոսկի կամուրջ մը՝ նետուած հայ եւ արաբ ժողովուրդներու միջեւ: